մեզ աղաչեմք, զաջողութիւն ճանապարհի, և զանդորրութիւն ժամանակի, զի ուղղեսցուէ հրեշտակին քոյոյ մեզ, հասանիցեմք 'ի տեղին այն' ուր փութամք, և յետ որոյ' առ նաւահանգիստն յաւիտենականի կեցութեան ժամանել երջանկութս կարողանայցեմք ամէն:

Երթիցուք խաղաղութ յանուն Տն, Եւ անբիծ կուսին մարիամու, ամէն:

Այլ և նախ քան զելանելն, կալցէ ինքեան ընկերակից ճանապարհի զպահապան հրեշտակն և զայլս սբս' և զսրբուհիս Այ, որք են մարմինք, կամ մասունք նոցին 'ի սրբատեղիսն, ուր յայնժամ գնալոցնիցէ:

Եւ այսպէս ելցէ 'ի տանէն Եւ սկսանիցի զճանապարհ իւր, ասելով զերրորդ մասն վարդրնին մինչ որ ժամանէ առ նախկին եկեղեցին; հանգչելով երբեմն, և մտածելով զխորհուրդ կենացն Քի, կամ սրբուհւոյ կուսին մարիամու ըստ ժամանակին իւրոյ: